

ծեցի որ տախտակի մը վրայ գամերու և ուրիշ փափոխութիւն ընելու նիւթերու հետ թղթէ շրջապատով ձրբագ մը գնեմ, որպէս զի ծով ձգելն վերջը երբ ալեաց ծփելու ըլլան, իրենք կարենան տեսնել և առնել: Ի՞նչ ընդհակառակն իրենք ասկէ աւելի վախցան, տեսնելով որ այս լուսնաւերնէս հեռանալով ջուրին վրայէն դէպի ՚ի իրենց վրայ կը քալէր: Ավկարծէին անշուշտ որ այս ալեաց վրայ թափառող լուսոյն առաջ երթալուն մէջ գաղտնիք մը ըլլայ, որովհետեւ լոյսն որչափ որ իրենց կը մօտենար՝ իրենք ալնոյն չափով կը հեռանային անկէ աղաղակելով և կատաղի և հայհոյանաց ձայներ հանելով. այսպէսով վերջապէս բոլորովին հեռացան: Որովհետեւ օդը հանդարտ էր և ծովը խաղաղ, անոր համար երկու ժամի չափ վառեցաւ լոյսը: Երբորբնիկները ցամաք հասան, տեսնելով իրենց զարհուրած իրին ոչընչութիւնը՝ ծիծաղի նիւթ մը եղաւ,,:

՚Ի՞՞-Ի՞-ԼՇԻՆԹԱ: ՚Այս կղզւոյս բնակիչներն ալ ՚աբուայի բազմաձիւղ ցեղին յառաջ կու գան. մորթերնին սեէ, բայց մէկ անորոշ գոյն մ'ունին, որ դեղնի և թուխի խառնուրդ ըլլալով թանձր գոյն մը առած է: Հասակնին բարեշափէ և ընդհանրապէս հինգ ոտքէ մինչեւ հինգ և երկու բթացափ բարձրութիւն ունին: ՚Ի՞նդամնին սևամորթից պէս նուրբ և փոքր չէ, բայց ոչ ալ ՚ալինեզիացւոց պէս բարեձե է: ՚Ո՞ազերնին գանգուր է և մինչեւ ուսերնին կը թողուն. ծերերը մօրուքներնուն մասնաւոր խնամք կը տանին և երկայնագէս են: ՚Այս կղզւոյս բնակիչը և մանաւանդ երիտասարդները իւղային նիւթ մը կը քսեն մօրթերնուն վրայ, որով մասնաւոր յատկութիւն մը կ'ունենայ մօրթերնին և ողորկութիւն կ'առնու: ՚Այս կողմերս տեսակ մը բորսութիւն կայ, որ փոխադրական ալ ըլլալով շատ ջարդ կ'ընէ:

Տարեց մարդկանց գէմքը ցուրտ և հանդարտ պարզութիւն մը կ'առնու, որով յայտնի կ'ըլլայ տարիքներնուն

շատութիւնը: Ի՞այց բնիկ երիտասարդ՝ ները ինչպէս ուրիշ ամէն տեղ, նշանաւոր են իրենց գործոց մէջ, այսինքն յանդուքն ձեռնարկութիւններով և աշխոյժ և ազնուական ոգւով: ՚Ի՞թէ այս ժողովրդոց գծագրութիւնը քննենք, զարմանալի երևոյթ մը կը տեսնենք, որ ոմանք խարդախ նայուածք մ'ունին, ուրիշները կասկածաւոր և արհամարհական, կան ալ որ ազնուական բարեսրութիւն մը կը ցուցընեն: ՚Աեանքերնին ընդհանրապէս մէկմէկու որոգայթներ լարելով կ'անցընեն և կամ ուրիշներէն պաշտպանուելու. բայց ընդհանրապէս կը գովուի իրենց մարդասէր հիւրընկալութիւնը:

Հայադիր¹

Արեգի Լ. - Յունուարի 6:

Տարւոյն առաջին ամիսն՝ մեր կիսագնտին վրայ, գրեթէ ամէն տեղ ըստ կերպարանաց բնութեան տիսուր է, քիչ շատ խոր ձմեռն ըլլալով, զոր քաղաքական և եկեղեցական տօնք միսիթարեն և յիշատակք անցելոց զըստեցնեն: ՚Այս ատեն մեր Հայաստան աշխարհին երեսն այլամենէն սգակերպ և ծանր երևոյթներէն մէկը կ'ընծայէ. գրեթէ բոլորովին ձիւնով և սառամանեօք ծածկուած, ձմեռն հոն իր աթոռոյն վրայ անշարժ կ'երեխ. կամ բուքերով երկինք երկիր մրրկելով, կամ թէ և պարզ ընէ՝ անանկ չոր և բարակ ցուրտ մը կու տարածէ օդուն մէջ, որ արեն պայծառութիւնը միայն պահած և կրակը մարած կարծուի: Համար գիշերը. երբ չորցած սառնապատ ծառոց թիւն կ'առնու: ՚Այս կողմերս տեսակ մը բորսութիւն կայ, որ փոխադրական ալ ըլլալով շատ ջարդ կ'ընէ:

1. Մեր եկեղեցական կարգաւորութեան գրոց մէջ Տօնացուցի և Տօնամակի հետ յիշուի նաև ՀԱՅԱԴԻՐ գիրք կամ ցուցակ մը, և կ'երեխ թէ երտօնից և յիշատակաց ցուցակ և կարգաւորութիւննիկ հայկական ամսոց կարգաւ շարուած: ՚Այս անունը՝ ի գործ ածեմք հոս իբրև նշանակող օրացուցի մը մեր աղբային յիշատակաց:

միջեն սարտուալի օձառուիկ պատրիցի մը կամ արևելեան հով մը փէշ ու գու գաւոր ծորակներու մէջ որոտալով այն երկայն վայերը վույերը լսեցընէ... Իսո ցեցէք գոտեցէք դուռն ու երդիք, ամէն ձեզք ու ծակտիք : Վհ, ինչ քաղցր է ամրածածուկ ձեղուան մը տակ, թէ և հողէ ըլլայ, կարմրաբոց փռան կամ թարի մը եղերք բոլորիլ, և 14-15 ժամ երկայն գիշերուան երրորդ կամ քառորդ մասը անցեալ դիպուածոց, և մանաւանդ հայրենեաց, և ամսոյն նոյնամիւ օրերուն մէջ հանդիպած բաները զրուցելով վիպասանելով անցընէլ : Վրացի ցանկալի էր եկեղեցականին հետքաղաքական և ազգային Յայսմառուրի կամ Հայադիր մ'այլ ունենալ . առաւար զայն կարդալ, իրիկունը ասովլ զբունուկ կրակին թոլորտիքը, Ի՞այց այս ամս սցո մէջ գիշեր մը և օր մը կայ, զոր հայն ամէն ազգէ աւելի մեծահանդէս կանցընէ, և չիկրնար տան մէջ արգիշեալ մնալ . այն օր ձմեռ չկայ. փոթորիկը կու թողը, ձիւն բուք կ'արհամարհէ, դուրս կ'ելլայ, կու փութայ յեկեղեցի, Վյտուածայայտնութեան տօնը կատարէ . և եռանդեամբ ցատքրտելով թագաջափ թանձր սառելն անդամ կոտրուէ, թմրած պաղած ջուրը կ'արթընցընէ, մէջը կու մմնէ՝ քրիստոսանիշ խոացին կնքահայր ըլլալու :

Այդ մեծ տօնին օրը սովորական հանդէսներէն զատ շատնշանտուոր դէպք այլ հանդիպած են մեր նախնեաց ատեն . սրոց մէկ քանին յիշենք այս իրիկուն մեր ընտանի կրակարանին եղերը բոլորած, թողլով վիպասանից զանոնք բանազարդելու, և գուսանաց՝ երգելու : Յիշելու դէպքերէս շատն հանդիպած է մեզմէ 800 և աւելի տարի առաջ, ԺԱ գարուն երկրորդ քառորդին, մեր Պիետրոս կաթողիկոսին օրեւը . որ այն դէպքերուն զլմաւորին պատճառաւ՝ ԳԵՐԱԴԱՐՅ ըստւեցաւ . և թէպէտ քիչ մը չափէն աւելի ազգասէրք և չափէն պակաս յունասէրք այլովեր են եղածին պատմութիւնը, բայց անչունիք է ինչուան իր եղբօրմէն, և այլ աւելի կայսեր սպառնալից յօնից համբաւէն

վկայութեանը մէջ : ԼՇԷ Պիետրոս կաթողիկոսի ամս հրաշագործ չէր, իր ձեռքը եղած խաչն իրմէ առաջ այլ շատ հրաշքներ ցուցեր էր . մենք կու սիրեմք Պիետրոսի պերծախոսիկ շարականները, բայց չեմք կրնար գովել իր պերծասեր հնարքները, որովք եկեղեցիէն աւելի քաղաքական տեսութեանց մէջ անուն թողած է : Ի՞ր քառասնամեայ հոգևոր տիրութեան առաջին տարիները՝ Վնիթ թագաւորաբնակ քաղաքին մէջ կու նատէր, և երկրորդ թագաւորի մը պէս փառօք փայլէր, 800 մեծ գեղերու կալուածատէր ըլլալով, և հայրապետանոցին մէջ կամ իր հետ քանի մը վարդապէտ, 12 եպիսկոպոս, 60 կրօնաւոր քահանայ և 500 աշխարհիկ երեց պահելով . իսկ իշխանութեանը տակ կային 500 եպիսկոպոս կամ թեմ, որ թէ և շափազանց երենայ, գոնէ եղածին կրկինէն աւելի չէ : Ինդդիմակ բանն այս է, որ որչափ Հայոց կաթուղիկոսն իշխանատէր կ'երեար, ժամանակակից թագաւորն այլ՝ Յովհաննէս-Ամբատ՝ իմաստատէր էր . երկուքն այլ խորագիւտ, որով երբեմն համաձայն երբեմն հակառակ իրարու : Ի՞այց ինչ պէտք է մեզի հիմա ծաղկած և վաճառաշահ մայրաքաղաքի մը մեծերուն քաղաքական գաղտնիքը քննել . մինչ զեռ չորս դին համբաւ կու հնէ թէ մեծազօք կայսրն Ա ասիլ Ա . Պօլան եւեր և շատ զօրօք կու գայ ՚ի Պանտոս, կ'անցնի ՚ի Տայս, Ա բաց թագաւորէն պահանջելու, այն երկիրները՝ զոր Ա աւիթ կուրապաղատն Տայոց թողեր էր կայսեր, և Ա բացին կորզեր էր : Ծ րջակայ թագաւորք և ազատագրուի իշխանք վախով կամ պատուով կու փութան կայսեր . մեր քաղրատունի թագաւորն Յովհաննէս-Ամբատ, ոչ այնքան թանձրամութեանն համար կու դանդաղի և չիշարժիր, որչափ մեծամութեամբն չուզեր իր ազատ աթոռը նուաստացընել, և իր գրացի մանրիկ թագաւորաց նմանիլ . բայց անոնցմէ, և ինչուան իր եղբօրմէն, և այլ աւելի կայսեր սպառնալից յօնից համբաւէն

կասկածելով, իր տեղ անոր երեսը պատռելու կ'ուղարկէ զՊետրոս կաթողիկոս։ որ և իր եկեղեցական հետեղաց և սպասաւորաց հետ արքունի գրան մարդիկ և զինուորական գունդ առած՝ իբրև երկթագեան իշխանապետ մը կ'ելլայ կայսեր գիմաց, անոր ձմերոցը։ 'ի Պիոնտոս։ և ըստ արժանւոյն պատուելով և պատռուուելով, կու չըաւիրուի մերձակայ Իշտուածայայտնու թեան տօնին օր ջրօրհնեաց հանդեսը կատարել, ըստ ոմանց Շորոխ գետոյն վրայ, այլ հաւանօրէն ըստ այլոց՝ Տրապիզոնի գետակին վրայ։ Յետ ազօթից և օրհնութեանց՝ երբ միւռոնը կու ծափէ 'ի ջուրն և մէջը կու ձգէ այն խաչը՝ որ մասն ունէր 'ի բուն փրկչական խաչեն և 'ի լուսաւորիչն մեր, ջրէն լուսոյ ցնցուգը կու ծագեն, 'ի զարմանս ամենեցուն և 'ի մասնաւոր պարձանս հայոց։ Իյս է պարզ և սփուգագոյն պատմութիւնն զոր ժամանակակիցն Իրիստուկէս լաստիվարտեցի պատմէ, և իրմէ առած լուրդան և այլք։ որբ ոչ քաղաքը յիշեն և ոչ գետոյն անունը, և ոչ անոր ջրոց յետս 'ի վեր դառնալը, ինչպէս կ'ըսեն Ալիրակոս և այլք ումանք։ — Ա անայ Ա արագ վանքը պարտողն տեսած է հոն Պիետրոս կաթողիկոսի գերեզմանը այսու արձանագրութեամք։ « Թ.Բն. Դ.Ց.Ա. Ա.Ց. է ՀԱՆԳԻՄՍ ՏԵԱՌՈՒ ԳԵՏՐՈՍԻ ԿԱԹՈՂԻԿՈՍԻ ՈՐ Ի ՏՐԱՊԻԶՈՆ ԶԳԵՑՆ ՃՐՈՒ ԱՐԳԵԼԱՑ ԱՌԱՋԻ ՎԱՍԻ ԱՐՔԵՍԻՒ։ Իյս արձանագիրս կաթողիկոսին մահաւան ժամանակակից չէ։ վասն զի ինքն այդ թուականէն շատ տարի վերջը վախճանեցաւ 'ի լեբաստիա, և հան այլ 'ի լուսականս կայ անոր գերեզմանն ։ ըսել է որ նշխարաց մէկ մասն փոխադրուեր է 'ի լուսական արագ, ուր երբեմն նստէր, և գերեզմանին վրայ գրուեր է ջրօրհնեաց հրաշից թուականն, որ և ստուգիւ 471 (Դ.Ց.Ա.) հայոց թուականն (1022-23 ամ Վրիստոսի)։ թուականը այսպէս կու համեմատեմք, բայց Շորոխ (կարդամութիւնի) գետը չեմք

կինար Տրապիզոնի մօտեցընել, վասն զի լեռներով զատուած և շատ հեռու են իրարմէ։ ուրեմն յայտնի սիսալ կայ ատոր մէջ։ Օ այն այլ թողը հանդերձ յօդուածոյ պատմութեամբք, կարդամք գիմաւոր դիպուածին մէկ ճոխա բան գրուած նկարագրութիւնը, որոյ հեղինակն մեր ծանօթ պատմիչներէն չէ, և քիչ մը ճամարտակող և ճակատամարտող է։

“ Եւ գնացեալ կաթուղիկոսն առ կայսրն 'ի Տրապիզոն, ունելով ընդ իւր եպիսկոպոսունս երկոտաան և եօթանասուն քահանայս յարեղայից, և երկու բանիբուն վարդապետու, զեազմիմաստոն զՅովսէփ Հնծուցն, և զբացն և զանյաղթն զլոզեռն Յովսէփ, հաննէս, այլ և 'ի զինուորական գանէն և յաւագաց արս երեք հարիւր։ Եւ առեալ 'ի թագաւորական տանէն գանձու ոսկւոյ և արծաթոյ, ձիս և ջորիս։ Օ որ տեսեալ ինքնական Ա ասիւ զՏէր Պիետրոս հայրապետն։ յոյժ ուրախացաւ։ Վանցի համբաւ, առաքինութեան նորա և վարուց ոլրութեան հասեալ էր յառաջացոյն առ թագաւորն։ Ա ասն զի էր սքանչելի այր, լի ամենայն բարի մասմբ, և ունէր չնորհ իմն աստուածական բժշկեց զախտաժէտու և հալածեց զդես։ Ա ասն որոյ և Ա ասիւ գերագոյն մեծարեաց զնաքաննայն պատրիարքունս Յունաց, և լրմտութեամբ ընկալաւ, զաերեալ ընծայս նորա և մեծաշնուրութեամբ պատիւ արարեալ եւ, պիսկոպոսացն և ազատացն՝ որ ընդ նմանէին։ Եւ 'ի նոյն առուրմն եւ հաս տօնն ծննդեանն և յայտնութեանն Վրիստոսին։ և ել ամենայն զօրքն իւրավլը և քահանայիւք յօրհնել զծուրն։ Վոչեաց և զկաթողիկոսին կոսն հայոց իւրայնօք 'ի յեզր գետոյն։ և հրամայեաց զի նախ Տէր Պիետրոս օրհնեսցէ զծուրն, և ասա Յոյնք։ Եւ յորժամ օրհնեաց և էարկ Տէր Պիետրոսն զմեռոնն 'ի ջուրն և զինի սուրբ իւղան հարկանէր երեք

„անգամ զսուրբ խաչն՝ ի գետն. և ա-
„հա հուր սաստկապէս բոցագոյն ծի-
„րանածաւալ փայլատակեաց՝ ի խա-
„չն, և իբրև զաղեղն որ յամպս գնի
„ցոլացեալ՝ խորան առնոյր՝ ի վերայ
„գետոյն. և որպէս զսրահատաձար
„լոտուծոյ՝ ի մէջ առեալ ունէր զամե-
„նեսեան զարս և զկանայս. և շող լու-
„սոյն բակ առեալ պարփակէր զբազ-
„մութիւն ամբոխին ընդ ինքեամբ :
„Եւ լուսաւորեցան գէմք մարդկան առ
„հասարակ որպէս զվարդ կարմիր. և
„լոյս ելանէր՝ ի խաչն իբրև զյորդա-
„հոս ջուրս որ բղխեն յաղբերաց : Իսկ
„սուրբ խաչն երեէր՝ ի ձեռն կաթողի-
„կոսին որպէս բոյ վառեալ լուսով .
„և՝ ի լուսոյ անտի երփն երփն հատա-
„նէր խաչաձև ըստ չափոյ խաչին, և
„խաղայր՝ ի վերայ ջուրցն իբրև զթը ըս-
„չուն սլացեալ որիշ որիշ՝ ի միմեանց .
„և հոտ անուշութեան նսյոր զամե-
„նեսեան : Իսկ բազմութեան ժողո-
„վյան զահի հարեալ կային և ազազա-
„կէին և ասէին, Տէր ողօրմեա : Եւ
„մինչդես նոքա ազօթէին, ժողովե-
„ցաւ լոյսն միագունդ, և երիցս անգամ
„եհար զթուր գետոյն և ամփոփեցաւ
„լոյսն՝ ի ծոց խացին. և ջուր գետոյն
„զետեղեալ՝ ի կրունկն դառնայր և
„զառ՝ ի կոյս արգելաւ վայր մի : Հայն
„ժամ զարհուրեալ ամբոխին և բազ-
„մութիւնն անգեալ յերկիր դողային :
„Եւ սուրբ խաչիւ տեառնագրեաց կա-
„թողիկոսն երիցս անգամ զգետն և
„պսաց. Տեսին զքեզ ջուրը լոտուած,
„տեսին զքեզ ջուրը և երկեան և խորք
„խոռվեցան. և Տեսին ամենայն ծագք
„երկիր զփրկութիւն քո, և ժողո-
„վուրդք զսքանչելիս սուրբ նշանի քս :
„Եւ արդ որպէս՝ ի ձեռն սուրբ խաչիս
„քուեկաց ջուր գետոյս կանգուն, գնաս-
„նց դարձեալ յընթացս իւր սրպէս
„յառաջն : Եւ ապա դարձաւ գետն
„՝ տեղի իւր, և խաղացեալ գնայր որ.
„պէս յերէկն և յեռանդն: Հայնժամ
„թագաւորն լի ասիլ և ամենայն զօրք
„նսրա անկան առ ոտս երանելի սուրբ
„կաթողիկոսին Պետրոսի . և մէծա-

„գոյ հառաջանօք համբուրէին ըզ-
„սուրբ նշանն և արկանէին զօրչնեալ
„ջուրն՝ ի վերայ գագաթանց իւրեանց .
„Իսկ թագաւորն լի ասիլ զնէր զթագն
„՝ ի գետինն . և հրամայէր Տէր Պի-
„տրոսին արկանէլ ափովն իւրով զջուրն
„օրհնեալ՝ ի վերայ զլխոյն իւրոյ : Եւ
„առեալ կայսրն զգետարգել սուրբ նը-
„շանն ի ձեռս իւր և անյագաբար
„համբուրէր զնա և նովաւ կնքէր զա-
„մենայն զգայարանս իւր . նոյնպէս և
„մեարապօլիտն և ամենայն ժողո-
„վուրդքն՝ եւսափափաք համբուրիւ
„ողջագուրէին զամենայաղթ սուրբ
„նշանն և զաջ կաթողիկոսին . և՝ ի
„համբուրելն զսուրբ նշանն՝ բազմաց
„լինէր առողջութիւն : Եւ մինչև օրն
„աաբաժամեցաւ՝ ոչ աւարտեցաւ համ
„բոյրն ժողովրդեանն՝ ի բազմութենէ
„ամբոխին . :

Պետրոս կաթուղիկոս այս հանդէսը
և գեսապանութիւնը կատարելէն ետեւ՝
գարձաւ յլնի . բայց երկար ատեն հոն
շիմնաց . թագաւորին և իր մէջ տարա-
ծայնութիւն ընկաւ . Յովհաննէս մեր
ժեց զնա՝ ի կաթողիկոսական աթո-
ուոյն, և տեղը զրաւ զՊահոսկոս Աա-
նահնի լանաց և թեմին արքեպիսկո-
պոս առաջնորդը . որ հարկաւ քիչերուն
ընդունելի եղաւ . անոր համար ստիպե-
ցաւ թագաւորն նորէն զՊետրոս գար-
ծնել տալ յաթոռը, միջնորդութեամբ.
Յովսեփայ լուսանից կաթողիկոսի . ո-
րուն հետ 4000 եկեղեցականք այլ ժո-
ղովքի եկան յլնի, և թագաւոր ու
կաթողիկոս հաշտեցան : Լոյս հանդէսն
այլ մասամբ լոտուածայայտնութեան
տօնին եղաւ . և երբ հակաթոռ կամ
բռնադատեալ կաթողիկոսն Պահոսկո-
րոս աւուր պատշաճ տօնը կու կատա-
րէր, քանի մը յանդուգն անձինք գըլ-
իւէն քողը պատռեցին, որ կաթողիկո-
սութեանն նշան էր, և դարձուցին զինքը
իր վանքը, ուր և յօժարութեամբ գը-
նաց . բայց այդ անարգանաց հարուա-
ծը շատ ծանր էր իրեն, քիչ ատենէն
սրտառած մեռաւ . յօմանց իբրև բըռ-
նաթարող դատափետեալ, և յոմանց

իբրև ակամայ յանձնառու արդարացեալ, և իր ձգնասէր բարուցը և զիտութեանը համար պատուեալ:

Դարձեալ յետ ինն տարւոյ (1045) նոյն ինքն Պիետրոս կաթուղիկոս Գ քօրչնեաց հանդէսը կատարեց ուրիշ խառն տէսարաններով՝ ի կարին գաւառի, որ հիմակուան Արգիրում քաղաքէն զատանուանի և հարուստ քաղաքաւան մ'այլ ունէր, Արծն բառած, Կարնոյ գաշտին մէջէն անցնող եփրատական Ակ ջրոյն անդիի (աջ) կողմը, շամբին (Սալլետ) մօտ, որ հարիւրաւոր եկեղեցիներ ունէր և վաճառականութեան բարեօք լցեալ էր. և մեր պատմելու զիալուածէն իրեք չորս տարի ետև այրելով և աւրելով՝ ի Ուուրքաց՝ հիմաթողածէ իր անուան և նշխարաց յիշատակ Գարա-արդ և Ա աղաւեր գեղերը. ուր թերեւս հնախոյզք դեռ կարենան գտնել հետաքննութեան արժանի բաներ, Պիետրոսի երկրորդ անգամ կաթողիկոսութեան աթոռ ելլալէն ետե մինչեւ այս նոր հանդիսին սակաւաթիւ տարիներուն միջոց՝ Հայաստան շատ յեղափոխութիւններ տեսեր էր. Քովհաննէս թագաւորն մեւած, որդին Գաղիկ թագաւորութենէ զրկած, Ինի մայրաքաղաքն ի ձեռս Յունաց անցեր, թագաւորազունք ելեր՝ ի Փոքր Հայս գացեր էին. իսկ ինքն Պիետրոս որ Ինւոյ վաճառման կամակից էր՝ նըստեր էր հոն առաջին փառօքն, և քաղքին նոր յոյն քաղաքապէտէտէն այլ պատիւ կ'ընդունէր, որով բուն քաղաքացեաց այնչափ հաճոյ պիտի ըլլար. քիչ ատենէն Յունաց այլ կասկածելի եղաւ. և երբ նոր քաղաքապէտ եկաւ՝ կայսեր Հրամանաւ զինքը քշեց անկէ և հրամեց երթալու նստելու յԱրծն Կարնոյ. ուր և վերը յիշեալ տարին մեծաւ հանդիսիւ կատարեց Գ քօրչնեաց հանդէսը Եփրատայ նորընծայ վտակաց մէջ. Երբ խաչալուայ ընելու պահն հասաւ և կտրիճք պատրաստուէին նետուելու՝ ի ջուր, տաձիկ մ'այլ ուղեց անոնց հետեւիլ. կաթուղիկոսն հասկրցընել տուաւ անոր թէ այդ բանը քրիո-

տանէից միայն կու պատշաճի իբրև կրօնական հանդէս մը. տաձիկն այլ իմացուց որ ինքն այլ քրիստոնեայ ըլլալու և մկրտուելու համար կ'ուզէր մտնել՝ ջուրն. և հաւանութեամբ կաթուղիկոսին մտաւ: Այս ատեն միւռունակիր սպասաւորն՝ պատակեայ շիշը ձեռացը վրայ զարնելով կոտրեց և թափեց թէ ջրին և թէ նորահաւատին վրայ, երկուքը մէկէն կնքելով. բայց շիշը կոտրելու ատեն ապակեոյ կտոր մը ձեռքը վիրաւորելով՝ իւղը, ջուրը և արինը մէկտեղ խառնեց: Այս բանս կ'ըսէ ժամանակագիրն, անյաջող դիպուածի մը գուշակութիւն սեպեց հանդիսատես ժողովուրդն. մանաւանդ երբ իրօք այլ հանդիպեցաւ: Ա ասն զի երբ յետ հանդիսին կաթուղիկոսն նստեր էր՝ ի սեղան, յանկարծ կայսերական հրամանաւ մարդիկ եկան զինքը վերուցին տարին Լուղտոյ-առինձ ըսուած գիւղին բերդը, որ հիմա Գաղտառիձ կ'ըսուի, և երկու գեղէ, մեծ և փոքր, Կարնոյ և Լուղտեաց միջասահման: Այնպէս քիչ ատենէն իր քեռորդին և յաջորդը, Լուցիկն այլ՝ բռնեցին և ուրիշ բերդ մը արգիլեցին. յետոյ զերկուքն այլ՝ ի լոստանդնուպօլիս խաւրեցին:

Այս դիպուածէս եօթն կամ ութտարի ետե (1052)՝ նոյն կաթուղիկոսին օրը, բայց ոչ իր ներկայութեանը, նոյն մէծ տօնին խթման գիշեր ցաւալի դիպուած մը հանդիպեցաւ՝ ի Կարսքաղաքի, որ Արծին նման վաճառականութեամբ հարստացեր էր, և Ինի պէս առանձին թագաւորաց մայրաքաղաք էր քիչ մը առաջ. մինչդեռ պաշտօնասէրք գիշերային ժամերգութիւնը կատարէին, և ամենեւին թշնամոյ կասկած մը չկար, և անոր համար քաղաքապահ զօրքն այլ անզգոյշ էին, տօնին զբաղած, Ուուրքաց Տօղուլըէկ սուլտանին հօրեղթօրորդացն ապատամբ: Գուգուլմուշին թափառական ասպատակներն ձմերային սովալլսւկ գայլոց պէս մըտան՝ ի քաղաք, և սրբազն ու ազգային հանդէսները յարցունք և յարիւն դարձուցին. տուն և եկեղեցին ող-

բոյ և մահու տեղ եղան . ով որ կրցաւ քաղքին ամուր բերդը փախչիլ՝ ազատեցաւ . մնացելոց շատն ջարդուեցաւ , ամէնքն կողոպտեցան իրենց ստացուածքներէն . հարստութեամբ լցուած քաղաքն աւեր դարձաւ . վասն զի անզգամ կողոպտիշքն ինչպէս աւազակօրէն մըտան՝ այնպէս ելեն այլ բաւական չի սեպելով՝ կրակ այլ տուին , և ետևնէն սե ծուխը վկայ թողուցին իրենց գաղնութեանը : Ի՞այց Լարս իր ամուր բերդին պատճառաւ բաղդաւոր գրտնուեցաւ քան զի՞րծն , նորէն նորոգուելով . սակայն նոյն արտճառաւան այլ աւելի շատ անգամ պատերազմի հարուածներ և մեծ նեղութիւններ կրեց , ինչուան մեր օրերը , (1855) :

Ոլողով հիմա այս տիսուր տեսարաններ , քիչ մ' այլ ուրախ դիպուածներ տեսնենք . փոխադրինք ուրիշ հայ աշխարհք մը , անցնինք դարուկէս ժամանակ , երթանք՝ ՚ի Աթիկիա , մեր վերջի թագակապ ցեղին հանդէմներուն ներկայ ըլլալու , նոյն այս սրբազնն օրը , զոր թերեւա աւելի քան զի՞ագրատունիս պայծառապէս տօնէին Ուուրինեանք . և առջիններուն կորուսած թագը՝ իրենց գլուխը դրուեցաւ յետ իրը 160 ամաց՝ Հայտնութեան տօնին օր , յամին 1198 , ՚ի ներկայութեան նուիրակաց զանազան ազգաց : Ի՞յս ազգաշուք փառաց նորոգութիւնն՝ արդիւնք է քաջութեան , ճարտարութեան , նաև փառասիրութեան | եւոնի , որ ըստ կարգի պայազատաց Բ՝ է այդ անուամբ , և ըստ կարգի թագաւորաց Ա՝ կ'ըսուի : Իրնախորդքը սովորաբար պարոն և երբեմն սեբաստոս կամ մարգիզ կ'ըսուէն , կամ մեծ իշխանք , և լերանց իշխեցող . որովհետև առաջ Փռիւգիոյ և Խուրիոյ լերանց , յետոյ Վիւլիկիոյ լերանց և դաշտաց օկսան տիրել . իր պապուն եղբօր և նախորդին քաջին Բ՝ թարոսի անուամբ այլ՝ մարտէ երէիր կոչուեցաւ իր վիճակն . իսկ այս | եռս իր պապուն Ա . | եռնի կործանած անունը կանգնելով՝ իր տիրած երկիրն ալ

Լառնի երէիր անուանել տուաւ : Ի՞աջութեամբ և խորամնկոթեամբ շրջակայ իշխանաց ահաւոր և պատկառելի ըլլալով և եւրոպացի մերձաւոր իշխանաց սիրելի և օգնական , համարձակեցաւ Ալեմանաց Ծրետերիկոս կայսրէն թագաւորութեան թագ ուզել , երբ կայսրն իր երկիրը եկաւ՝ ՚ի Ուլևկիաքաղաք , ուր փութացաւ | եռն խաւրել ընդ առաջ նորա զկաթողիկոսն և զ|| . Երսէս | ամերոնացին . դժբաղդաբարծերունի կայսրն հոն անզգուշաբար գետոյն մէջ լուացուելով խեղդեցաւ , և թագաղբութեան խոստումը անկատաց մնաց : Ի՞այց | եռն դարձեալ խնդրեց զնոյն անոր յաջորդող որդիւն , յլքնրիկոս կայսերէ , և նաև՝ ՚ի սրբազնն պապէն Լելեստինոսէ . որք քանի մը պայման պահանջելով՝ ՚ի և ոնէ՝ ՚ի նշան հաւատակցութեան և միաբանութեան՝ խաւրեցին իրեն փափագած պերճափայլ թագը և առիւծանիշ դրոշ մը , յամին 1197 , ՚ի ձեռն Լոնրագոսի ծիրանազգեաց արքեպիսկոպոսին | Ո՞յենցայ . որոյ ընդ առաջ խաւրեց | եռն՝ իր խնամին և քարտուղարը , Յովհաննէս , որ էր Ոսոյ արքեպիսկոպոս . և ՚ի սկիզբն յաջորդ տարւոյն ՚ի տօնի Ո՞յտուածայայտնութեան ժողովեցան ՚ի | | . Ոսփիա եկեղեցի Տարսոնի , և մեծաւ հանդիսիւ թագաւորեցուցին ըզ | եռն՝ ՚ի վերայ Հայոց . օծողն էր Գրիգոր Ոպիրատ կաթողիկոսն , թագարերն վերոյիշեալ լատին եպիսկոպոսն , թագաւորութիւնը շնորհաւորող ատենախօսն՝ ըստ ոմանց սուրբն | Երսէս | ամերոնացի . իսկ հանդիսատեսքն՝ դեսպանք կամ պայլք արևմտեան տէրութեանց և վաճառակից հասարակապետութեանց , կրօնակարգ ասպետք , պատրիարքն Ոքորւոց Ո՞ստիոքայ , մետրապօլիտն Յունաց , Հայոց Լորուաղեմի եպիսկոպոսապետն , վեց մեծաթոռ արքեպիսկոպոսք , տասն եպիսկոպոսք Լիւլիկիոյ , բազմաթիւ վանահարք , վարդապետք և քահանայք . իսկ յաշխարհականաց յիսունի զափ բերդատէր հայ իշխանք , և որիշ լա-

տինացի իշխանք Ինտիոքայ և Ար. պրոսի տէրութեանց Հանդիսին փառքն | և ոնի համբաւն ընդարձակեց. Պաղ տատայ խալիփայն և Աստանդնուագոլ սոյ կայսրն իրենց կողմանէ այլ թագ խաւրեցին. իսկ | և ոնի երկրին չորս կողմը եղող իշխանք, ըստ բանի ժամանակակից պատմին Ամբատայ գուն դրստապի՝ զօրավարի, “ամսումն Ճանապարհաւ հեռու յիշեին զանսւն թագաւորին | և ոնի, և անտես՝ դու զային”.

Անձին | և ոնի թառն Բ. | և ոն թագաւորն այլ, յետ 74 ամաց, նոյն քաղքին և նոյն եկեղեցւոյն մէջ նոյն տօնին օրը յանձն առաւ թագաւոր օծուելու. և հանդիսին հուշակող ատենաբան եղաւ իր քարտուղարն Աշճամ Բարուն վարդապետ: — Խազաւորք մեր և ժողովուրդք իրենց մեծագոյն հանդիսի օր սեպէին այն օրը՝ յորում Քրիստոսի երեք տնօրինական մեծ և փառաւ որ յիշատակները տօնէին, թէ որբազն թէ արտաքին հանդիսիւ:

Ինչուշտ ախորժելի պիտի ըլլայ այս հանդիսից մէկնկարագիրը լսել ականատես օտարազգիկ մը, որ Ա. | և ոնի թագաւորութեան տամնը չորրորդ տարին հանդիպեցաւ իրեն և տօնին. այս անձնէ Ա իլէպրանտ օլտէնպուրկեան Հաննովէրի Հիլտէսհայմ քաղաքին կանոնիկոս վարդապետն, որ 1241 թուականին Ճանապարհորդելով յարեւելս՝ եկաւ՝ ի Վիլիկիա, և երկու ամսոյ չափ հիւրընկալութիւն գտաւ մեր թագաւորէն, զորնախ տեսաւ՝ ի Տարսոն, և յետոյ՝ ի Ախ. որոյ համար կ'ըսէ. “Այս քաղաք տէր թագաւորին մայրաքաղաքն է. բնակիչն անթիւ և հայ բռւստ. բայց պարիսպ չունի, անոր, համար կրնայի աւելի քաղաքաւան. ըսել քան թէ բռւն քաղաք, թէ որ Հայոց արքետիսկոպոսարանը չունենար. նաև Յոյնք հոն պատրիարք, ունին: Ասկայն ունի ամուր բերդ մը լերան գագաթը, որոյ ոտքէն կու սկսի քաղաքը աստիճանաբար դար՝ ի վայր ատարածուիլ. . . : Գրօրհնեաց հան-

,, դէսր Հայք այս կերպով կատարեն. ,, տօնէն 12 օր առաջ, զոր մենք ,, (Ա ատինք) ինստումով և կերուխու ,, մով կ'անցունենք, անոնք՝ ի պատիւ ,, տօնին ապաշխարութեամբ և պահօք ,, անցուցին, հրաժարելով և՝ ի ձկէ, ՚ի գինւոյ և՝ ի ձիթոյ. իսկ բուն խմբման ,, օրը բոլորովին ծումապահութեամբ կեցան, որպէս զի յետ վերջալուսոյն ապատարագը մատուցանեն. և բոլոր այն գիշերը աստու ածային պաշտամմէք անցուցին: Իսկ երկրորդ օրը Քրիստոսի ծումապահութեամբ, ըսել լով թէ Քրիստոս նոյն օրը ծնաւ, և յետ 30 տարւոյ դարձեալ նոյն օրը մկրտեցաւ: Առաւտուն ամէնքն փութային քաղքին մօտ գետոյն եղեղքը երթալու, ուր որ թագաւոր տէրն այլ կ'երթար, այսպիսի կարգաւ: Ինքն թագաւորն բարձրահասակ ձիու մը վրայ հեծած եր. իր քովէն կ'երթայինն Ալեման ասպետաց կարգապետն, Ալեկիոյ հիւրընկալ ասպետաց տաց բերդապետն, իրենց կրօնակից հազար ընկերներով. յետոյ գայթէ տէրն Առուբէն, փաքը թագաւորն, (Ա և ոնի եղբօր դստեր որդին), զոր ինքնականն Ութուն մէկուն գրօները գաւորին՝ թագով պատկել տուեր եր. այսոր ետեւէն կու գային իր երկրին ազնուականներն և բազմութիւն զօրականաց գեղեցկազարդ հագուած. որոց Ճորտերն ամէն մէկուն գրօները և վառերը ձեռոււլնին բարձրաց, անոնց սանձէն բռնած՝ մեծ թագաւորին առ Ծեւէն կ'երթային: Իրեն և ասոնց խումբին միջէն կու վազվուտին բազմութիւն զինակիր փայեկաց, իրը անձնապահ թագաւորին. իսկ բաղմութիւն ժողովրդեանն չորս կողմէն կ'ողջունէր զնա սաստկածայն ազաղակաւ, կաւ, ՍՊԻՐԻ ԹԵԿԱՆԻՐ: Այսպիսի մեծ հանդիսիւ թագաւորն կու գար իջնելու իրեն համար գետոյն եղերքը կանգնած վրանին տակ: Իրմէ ետեւ կու գային Յոյնք և իրենց պատրիարքն, հետեւակը, ըստ որբազն

„սպաներով, և այնչափ փողերու և
„ուրիշ երաժշտական նույագարամնաց
„ձայն ձգեր էին, որ աւելի հան
„դես մը քան թափօր մը կու ձեւա-
„նար: Այսնք այլ իրենց որոշուած տե-
„ղը՝ ի գետեզելքը կու սպասէին ու
„ըիշներուն: Յետոյ գային Հայոց եւ
„կեղեցւոյն ուխտն, մլրտելու խաչը
„բերելով և վայելքապէս յառաջելով
„իրենց արքեպիսկոպոսին հետ: որոնց
„խոնարհական կերպը և վայելքակարգ
„թափօրը շատ աւելի պիտի գովեի,
„եթէ մէկ երկայնամօրուք քահանայ
„մը, (ասովնաման ուրիշներուն), դժբաղ
„դաբար շփութութեան պատճառ ըրը
„լար: Վասն զի ասիկայ վերսիշեալ գե-
„տոյն խառնուող պղտիկ վտակէ մը
„անցնելու ատեն՝ ոտքին մէկ կօշիկը
„կորսընցուց, և ջրին ընթացքէն ազա-
„տելու համար անզգուշութեամբ աշ
„խատելովը՝ եպիսկոպոսին և ուրիշ
„ներուն անցնելուն արգելք եղաւ:
„թէ որ մէկն այսպիսի անհոգութիւն
„մը ընէր՝ ի Հիւսէսհայմ թափօրի
„ատեն, ասատիկ յանդիմանութիւն
„կառնուր: Այսնք այլ վերսիշեալ գե-
„տոյն եզերքը իրենց աեղը բանեցին
„կեցան: Երբոր բոլոր թափօրը մէկ:
„տեղ եկաւ, սկսան ասդիէն անդիէն
„երգել. և ինչուան կուրծքերնին ի-
„ջած օգուռոյց կծկի¹ նման երկայն
„մօրուքներնուն շարժելէն կ'իմացուէր
„որ աղէկ ոյժ կու տային յունարէն և
„հայերէն աւետարաններ. և ընթեր-
„ցուածներ կարդալու ատեն: և այն
„կերպարաննեալ Յորդանանը օրհնե-
„լով՝ բերած խաչերնին մէջը մկըրտե-
„ցին, և աջ կողմէն աղաւնի մը թոռ-
„ցին: Այն ատեն մէկն իշու վրայ հե-
„ծած գետոյն մէջ մտնալով և կանգուն
„կենալով՝ շաբարածայն² կոկորդով կան-

„չեց, Ալեյցէ Աւագաւոր մէր յաւիտեան: և
„գարձեալ Օբնեսցի և նոխախնամէալ
„պահեսցի ամենայն ուխտ գրիստոնէից:
„և երբ ամէնքն միաբերան անոր պա-
„տասխաննելով՝ Ամէն կու կանչէին,
„ինքն երգապետն ջրին մէջ կու թա-
„պըլտըկէր: որ ծիծաղելու պատճառ
„եղաւ շատոնց: Յետոյ թագաւորն և
„ուրիշներն այլ այն ջրով իրենք զի-
„րենք ցողեցին: իսկ Այսորիք մերկա-
„ցած կու լուացուէին մէջը:

„Այս արարողութիւնս լմբննալէն
„ետեւ՝ եկեղեցականք իրենց վանքը
„քաջուեցան, իսկ թագաւորն և զի
„նուորականք փութացան դէս՚ի դաշ-
„տերը, և պալարակապ երխվարները
„վազցընելով և նիզակներ նետելով
„զինուորական խաղեր ըրին: և բոլոր
„օրը մեծ ուրախութեամբ անցուցին:
„Երկրորդ օրը ամէնքն իրենց տեղը
„գարձան:

„Այս այլ գիտցէք որ տէր թագաւ-
„որն՝ այդ (Աիս) քաղքին քով իրեն
„զօսանաց պարտէզ մը պատրաստէր
„է, որուն սքանչելի փափկութիւննե-
„րը նկարագրելը կու խոստովանիմ որ
„կարողութենէս վեր է: Տօնը կատա-
„րելէն և տէր թագաւորէն հրաման
„առնելէն ետեւ, որ զմեզ շատ մեծա-
„պէս պատուեց, եկանք Այսարդա
„(Անաւարզա) ամուր բերդն: որոյ
„անուամբ թագաւորն իր նշանը Կա-
„տարդա կու հռչակէ „ . . . :

Այսպիսի հանդէսներ եթէ չկարե-
նան այլ ձևուուան սառամանիքը բոլո-
րովին հալեցընել, գոնէ գունագոյն ծիա-
ծաններ կու ձգեն վրանին: Երանի Ա-
տուծոյ հաշտութեան աղեղնակը յամ-
պըս տեսողին: Այնք դառնանք սպա-
սէնք մեր խոնարհ ու կիսամոխիր կիսա-
կարմիր կրակարանին քով:

1. Այս արևելեան երկայն մօրուաց վրայ զար-
մացող լստին վարդապետն՝ նմանեցընէ զանոնք
plenaria ըսուած բանի մը, զոր ստուգիւ չեմ համ-
կնար ինչէ:

2. Հեղնակն կ'ըսէ շաբարածեալ կոկորդով,
mecherato gurgite. մեր միջին-գարեւան գուստանաց
մէկն կ'երգէ.

Եաբարդերան պլատոն եհամ: